

կարագոյն ժամանակով դնել զայն իմ տրամադրութեանս տակ ի վիեմնա : Կը յայտնեմ այստեղ հրապարակաւ իմ շնորհակալութիւնս նոյն Մատենադարանի վարչութեան, որ յանձն առաւ միջնորդութեամբ վիեմնայի Ազգային Մատենադարանին ուղարկել ինձ պատուական Ձեռագիրս :

Օրինակութիւնը կատարեցի խնամով : Մեծ. Հ. Գէորգ վ. Փանչիկեան բարի գրտնութեամբ համեմատել օրինակութիւնս սկզբնագրին հետ. որուն կը յայտնեմ շնորհակալիքս :

Հրատարակութիւնը կատարութեամբ առաջին անգամ Հ ա ն դ է ս Ա մ ս օ ր ե ա յ ի մէջ<sup>2</sup>, ուսկից կ'արտատպուի այժմ առանձին հատորով : Ներածութիւնը կրած է սրբագրութիւն : Յաւելուածի մէջ ամփոփած եմ Սիմէոնի Յիշատակարանները, որքան անոնք մտաչելի եղած են ինձ :

Հրատարակութեանս կցած եմ նաեւ օտար եւ ռամկօրէն բառերու ցանկ մը՝ աղբիւրներ նշանակելով նաեւ իջաբուերը, որչափ կարելի էր : Բառացանկս կազմելու ժամանակ ինձի օգնական եղաւ Մեծ. Հ. Պօղոս Էսապալեան, որուն կը պարտիմ շնորհակալութիւն :

---

<sup>2</sup> Հանդ. Ամս., 1932, էջ 447—483, 677—690. 1933, էջ 115—128, 334—342, 479—495, 595—608, 701—713. 1934, էջ 59—69, 149—168, 283—306, 465—474, 547—570. 1935, էջ 79—96, 163—175 :

---